

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՏԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՌԵԱԿՏԻՎՆԵՐԻ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԳՀԱՊՁԲ-2020/15-4-ԵՊԲՀ-1>>**

ք. Երևան

«___» «_____» 2020 թ.

«Երևանի Միտիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցենն-Էներգոմաշ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն **Բ.Թադևոսյանի**, որը գործում է «Կոնցենն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձենել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառով և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **17348060 (տասնյոթ միլիոն երեք հարյուր քառասունութ հազար վաթսուն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, որից 312000 (երեք հարյուր տասներկու հազար) առանց ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացրած պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի

համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 65 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան
մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Ազատության
26/8,
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ
Հայաստան » ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
Հեռ՝ +374(10)209777
Էլ.հասցե՝ lawyer@c-e.am
Տնօրեն՝ Բաբկեն Թադևոսյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	նվազագույն չափումներ	լոտի միավոր	ՀՀ դրամով արժեք	միությունների քանակ	մատակարարման		
									հասցեն	միությունների քանակ	ժամկետը***
1	33691159/4	ԲԽԼ-խոլեստերոլ որոշման թեստ հավաքածու	HDLCholesterol Gen.4, 350 tests, cobas c, integra HDLCholesterol Gen.4, 350 tests, cobas c, integra Roche Diagnostics	Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ԲԽԼ խոլեստերոլի որոշման թեստ հավաքածու (HDL Cholesterol, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 350 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին	հատ	48100	432900	9	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	9	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փոփոխյալ ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային և օրվա ընթացքում

				պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:							
2	33691159/ 5	Եռգլիցերի դների որոշման թեստ հավաքած ու	TRIGL, 250Tests, cobas c, Integra / TRIGL, 250Tests, cobas c, Integra / Roche Diagnostics	Կորաս ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված եռգլիցերիդների որոշման թեստը հավաքածու (Triglycerides, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ` 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման այսմանները` 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	16170	210210	13	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացյան 114 հասցեով	13	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
3	33691162/ 31	Միզանյութի որոշման թեստ	UREAL,500 Tests,cobas	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված	հատ	16010	336210	21	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա	21	Ապրանքի մատակարար րումն իրականացվ

		հավաքած ու	c,Integra UREAL,500 Tests,cobas c,Integra Roche Diagnostics	միզանյութ որոշման թեստ հավաքածու (Urea, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ` 500 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:					բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով		ուն է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
4	33691159/ 6	Մազնեզիո ւմի որոշման թեստ հավաքած ու	MG Gen.2, 250Tests, cobas c MG Gen.2, 250Tests, cobas c Roche Diagnostics	Կորաս U311 անալիզատորի համար Նախատեսված մազնեզիում որոշման թեստ հավաքածու (Magnesium, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ` 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	28030	224240	8	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	8	Ապրանքի մատակարար ուն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի`

				Պահպանման պայմանները՝ 15-25°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:						20 օրացուցային օրվա ընթացքում	
5	33691159/ 7	Ալբումինի որոշման թեստ հավաքածու	ALB BCG Gen.2, 300Tests, cobas c, Int. ALB BCG Gen.2, 300Tests, cobas c, Int. Roche Diagnostics	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ալբումինի որոշման թեստ հավաքածու (cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 300 թեստ տուփում/հատ: Ստուգող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	14780	192140	13	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	13	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
6	33691159/ 8	Ամիլազա պանկրեատիկ	AMY-P, 200	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների	հատ	38380	383800	10	Գնորդի նշված հասցեով	10	Ապրանքի մատակարարումն

		որոշման թեստ հավաքածու	Tests, cobas c, Integra AMY-P, 200 Tests, cobas c, Integra Roche Diagnostics	համար նախատեսված α -ամիլազի (պանկրեատիկ) որոշման թեստ հավաքածու (Alpha-amilase Pancreatic, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 200 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:					ք.Երևան, Արվյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով		իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային և օրվա ընթացքում
7	33691159/9	Հիմնային Ֆոսֆատազայի որոշման թեստ հավաքածու	ALP IFCC Gen.2 S, 200T, cobas c, Int ALP IFCC Gen.2 S, 200T,	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված հիմնային ֆոսֆատազա որոշման թեստ-կասետ (Alkaline phosphatase, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 200 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան	հատ	11750	82250	7	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Արվյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	7	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի

			cobas c, Int Roche Diagnostics	շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:							ուի ներկայացվ ած պահանջի ` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
8	33691159/ 10	Լակտատ դեհիդրոգ ենազայի որոշման թեստ հավաքած ու	LDHI Gen. 2 acc.IFCC, 300T, cobas c, Int. LDHI Gen. 2 acc.IFCC, 300T, cobas c, Int. Roche Diagnostics	Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված լակտատ դեհիդրոգենազի որոշման թեստ- հավաքածու (LDHI2 IFCC, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ` 300 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության	հատ	19840	99200	5	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5	Ապրանքի մատակարար ումն իրականացվ ում է 2020 թվականին` միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի ` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում

				Ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:							
9	33691159/ 11	Երկաթի որոշման թեստ հավաքած ու	IRON Gen.2, 200Tests,cob a s c, Integra IRON Gen.2, 200Tests,cob a s c, Integra Roche Diagnostics	Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված երկաթի որոշման թեստ հավաքածու (Iron, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ` 200 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման այսմանները` 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության Ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	15950	63800	4	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	4	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին` միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
10	33691162/ 32	ISE Լուծիչ	ISE Diluent Gen.2, cobas c, Hitachi ISE Diluent	Կոբաս U311 անալիզատորի համար նախատեսված ISE լուծիչ: Օրիգինալ: Ֆորմատ` 5x300մլ/հատ: Պահպանման այսմանները` սենյակայ	հատ	62530	375180	6	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան	6	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին` միանվագ

			Gen.2, cobas c, Hitachi Roche Diagnostics	ին ջերմաստիճանում: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only					114 հասցեով		կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի ` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
11	33691162/ 33	Լվացող լուծույթ թթվային բնույթի (դետերգե տն2)	Acid wash Solution 2x1.8 L Acid wash Solution 2x1.8 L Roche Diagnostics	ԿոբասՍ311 անալիզատորի համար լվացող լուծույթ թթվային բնույթի (դետերգետ 2): Օրիգինալ: Ֆորմատ` 2x1.8լ/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only:	հատ	41620	166480	4	Գնորդի նշված հասցեով ք.Երևան,Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	4	Ապրանքի մատակարա րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի ` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
12	33691162/ 34	Կալիբրատ որ Lipids	Cfas Lipids	Կոբաս ինտեգրա և Կոբաս Ս311	հատ	20710	82840	4	Գնորդի նշված	4	Ապրանքի մատակարա

		բիոքիմիական անալիզերի համար	3x1 ML Cfas Lipids 3x1 ML Roche Diagnostics	անալիզատորների համար Calibrator f.a.s. Lipids: Օրիգինալ: Ֆորմատ՝ 3x1մլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8 քերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only:					հասցեով ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով		րումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային և օրվա ընթացքում
13	33691162/35	Էլեկտրոնային քանակական որոշման թեստ-հավաքածու	Ferritin Gen. 2 Elecsys, cobas e Ferritin Gen. 2 Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկտրոնային և Կորբաս e 411 անալիզատորի համար Էլեկտրոնային (Elecsys Ferritin) քանակական որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոնային ֆլուորիմետր Ենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման	հատ	86000	172000	2	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	2	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային

				պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում. Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic:						ն օրվա ընթացքում	
14	33691162/ 36	Էլեկսիս Ֆերիտին կալիբրատ որ	Ferritin CS Gen. 2 Elecsys, cobas e Ferritin CS Gen. 2 Elecsys, cobas e Roche Diagnostics	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս Ֆերիտին կալիբրատոր (Elecsys Ferritin CalSet): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխիմիալ մեթոդ ենտային անալիզ: Ֆորմատ՝ 4x1մ/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic:	հատ	31490	62980	2	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	2	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
15	33691162/ 37	Էլեկսիս Թիրեոտրո պ հորմոնի կալիբրատ որ	TSH CS Gen.2 Elecsys, cobac e	Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս Թիրեոտրոպ հորմոնի կալիբրատոր (Elecsys TSH CalSet): Մեթոդ՝ Էլեկտրոխիմիալ մեթոդ ենտային անալիզ:	հատ	31490	188940	6	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան	6	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ

			TSH CS Gen.2 Elecsys, cobac e Roche Diagnostics	Օրիգինալ: Ֆորմատ՝ 4x1.3մլ/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic:					114 հասցեով		փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
16	33691159/ 12	Էլեկտրոն վիտամին B 12 բանակակ ան որոշման թեստ- հավաքած ու	Vitamin B12 rackpack Vitamin B12 rackpack Roche Diagnostics	Էլեկտրոն և Կորաս e 411 անալիզատորի համար Էլեկտրոն վիտամին B 12 (Elecsys Vitamin B12) բանակական որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոնիտրոնիկ ենտային անալիզ: Ֆորմատ՝100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության	հատ	98390	196780	2	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	2	Ապրանքի մատակարար ումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացուցայի ն օրվա ընթացքում

				ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic:							
17	33691162/ 38	Դեպրոտե ինայգեր 125 մլ	DEPROTENI ZER 125ML DEPROTENI ZER 125ML Roche Diagnostics	Cobas b 121 անալիզատորի համար Դեպրոտեինայգեր: Օրիգինալ: Ֆորմատ` 125մլ/հատ: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic:	հատ	14450	14450	1	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
20	33691162/ 40	Ստրոմատ ոլայգեր 4DL	STROMATOL YSER-4DL 1 X 2L STROMATOL YSER-4DL 1 X 2L Sysmex	XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար նախատեսված ստրոմատոլայգեր-4DL (STROMATOLYSER -4DL), բայթայող նյութ: Օրիգինալ: Մեթոդ` Ֆյուլորեսցենտոցիտոմե տրիային անալիզ: Ֆորմատ` 2 լիտր բայթայող նյութ/հատ:	հատ	42000	210000	5	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի

				<p>Ստուգվող նմուշ՝ երակային և մազանոթային արյուն: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic:</p>							<p>ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացուցայի ն օրվա ընթացքում</p>
21	33691162/ 41	Սելկլին	<p>Cellclean 50 ML Cellclean 50 ML Sysmex</p>	<p>XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար Սելկլին (Cellclean) մաքրող նյութ: Օրիգինալ: Մեթոդ՝ Ֆյուրոցենոցիտ ոմետրիային անալիզ PocH 100i, KX-21 N: Ֆորմատ՝ 50 մլ Cellclean/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2</p>	հատ	40080	200400	5	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5	<p>Ապրանքի մատակարար ումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացուցայի</p>

				անկայություն, For In Vitro Diagnostic:						ն օրվա ընթացքում	
22	33691159/13	Գլիկոլիզացված հեմոգլոբին A1c քանակական որոշման թեստ	HbA1c TQ Gen.3, 150Tests,cob a s c 501 HbA1c TQ Gen.3, 150Tests,cob a s c 501 Roche Diagnostics	Գլիկոլիզացված հեմոգլոբինի որոշման թեստ-հավաքածու (HbA1C) Կոբաս U311 անալիզատորի համար: Օրիգինալ: Ֆորմատ` 150 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյուն: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 անկայություն: For In Vitro Diagnostic only	հատ	91950	91950	1	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
23	33691159/14	Հեմոլիզացնող ռեագենտ (ամբողջական արյուն)	HbA1c TQ haemolyzing rgt, cobas c HbA1c TQ haemolyzing rgt, cobas c	Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված հեմոլիզացնող ռեագենտ /ամբողջական արյուն/ (Hemolyzing Reagent Gen.2, cobas c /Whole blood/): Օրիգինալ:	հատ	33850	33850	1	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ

			Roche Diagnostics	Ֆորմատ՝ 51 մլ հեմոլիզացնող ռեագենտ/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:							Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային և օրվա ընթացքում
24	33691159/15	Գամմա-գլյուտամիլ տարանսպեպտիդազ և որոշման թեստ հավաքածու	GGT Gen.2, 400Tests, cobas c, Integra GGT Gen.2, 400Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված գամմա-գլյուտամիլ տրանսֆերազի որոշման թեստ հավաքածու (GGT, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 400 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում:	հատ	19630	78520	4	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Արվյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	4	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային և օրվա ընթացքում

				Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:							
25	33691159/16	C-ռեակտիվ սպիտակուլի որոշման թեստ կասետ	CRP Gen.3, 250 Tests, cobas c CRP Gen.3, 250 Tests, cobas c Roche Diagnostics	Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված C-ռեակտիվ սպիտակուլի որոշման թեստ կասետ (CRP cobas c311): Օրիգինալ: Ֆորմատ` 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	153080	306160	2	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Արվյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	2	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փոփոխյալ ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային և օրվա ընթացքում
26	33691159/17	Անտիստրեպտոկոկիկ և-O որոշման թեստ կասետ	ASLO TQ, 150Tests, cobas c ASLO TQ,	Կոբաս U311 անալիզատորի համար նախատեսված անտիստրեպտոկոկիկ-Օ որոշման թեստ կասետ (ASLO TQ, cobas c):	հատ	64020	128040	2	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Արվյան 60 և/կամ	2	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝

			150 Tests, cobas c Roche Diagnostics	Օրիգինալ: Ֆորմատ՝ 150 թեստ տոլփուլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:					Մուրացան 114 հասցեով		միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
27	33691159/ 18	Լակտատի որոշման թեստ հավաքած ու	LACT Gen.2, 100 Tests, cobas c, Integra LACT Gen.2, 100 Tests, cobas c, Integra Roche Diagnostics	Կորաս Ինտեգրա և Կորաս U311 անալիզատորների համար նախատեսված լակտատի որոշման թեստ հավաքածու (cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝100 թեստ տոլփուլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 15-25°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին	հատ	19630	235560	12	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	12	Ապրանքի մատակարար ումն իրականացվ ում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացուցայի

				պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:						ն օրվա ընթացքում	
28	33691162/ 42	ISE Ստանդարտ տ ցածր	ISE Standart low 10x3 ML ISE Standart low 10x3 ML Roche Diagnostics	Կորաս U311 անալիզատորի համար Նախատեսված ISE ստանդարտ ցածր: Օրիգինալ: Ֆորմատ` 10x3մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` սենյակայ ին ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only:	հատ	6250	6250	1	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին` միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի` 20 օրացուցայի ն օրվա ընթացքում
29	33691162/ 43	ISE Ստանդարտ բարձր	ISE Standard high 10x3ML ISE Standard high 10x3ML Roche Diagnostics	Կորաս U311 անալիզատորի համար Նախատեսված ISE ստանդարտ բարձր: Օրիգինալ: Ֆորմատ` 10x3մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման	հատ	6250	6250	1	Գնորդի նշված հասցեով ք.Երևան, Ա բովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1	Ապրանքի մատակարար րումն իրականացվ ում է 2020 թվականին` միանվագ կամ փուլային ըստ

				պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only:						Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային և օրվա ընթացքում	
